

ՎԻՏՐՈՒՎԻՈՍԻ, ԲՐԱՄԱՆՏԷԻ,
ԼԷՈՆԱՐԴՈՅ ԴԱ ՎԻՆՉԻԻ, ՊԱԼԼԱԴԻՈՅԻ
ԾԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ
ԵՒ ՀԱՅ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՓՈԽԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Այն, որ հայ միջնադարեան ճարտարապետութիւնը, յատկապէս հոգեւոր պաշտամունքային, իր որոշակի ազդեցութիւնն է թողել եւրոպական, ռոմանական, գոթական եւ վերածննդի ճարտարապետութեան վրայ, արդէն շատ գիտնականների մօտ կասկած չի յարուցում (Օգիւստ Շուպի, Իոսիֆ Ստրիգոլսկի, Ադրիանոյ Ալպպոյ Նովելլոյ, Պաոլոյ Կունէոյ, Արմէն Զարեան եւ այլք)։

Սակայն փաստ է նաեւ, որ խնդիրը դեռեւս լիովին ուսումնասիրուած չէ (մասնաւորապէս մինչեւ հայ-իտալական ճարտարապետական շրջանը, սկսած Հայաստան-Շումեր, Հայաստան-Բարբելոն, Հայաստան-Միջագետք, Հայաստան-Էգէյեան մշակոյթ, Հայաստան-Էտրուսական մշակոյթ, Հայաստան-Յունաստան, Հայաստան-Հին Հռոմ եւ այլ շրջանների արուեստների փոխառնչութիւնների, Լէոնարդոյ դա Վինչիի հայկական վարկածի եւ այլ խնդրայարոյց հարցերի շուրջ)։

Խնդրի լուծման ճանապարհին անկասկած կարիք կը լինի պատմատեսական, կոնկրետ յուշարձանների յատկազօային եւ ծաւալատարածական յօրինուածքների եւ ընդհանրապէս հայ-իտալական առնչութիւնների համակողմանի, զուգահեռ եւ հետեւողական հետազօտութիւններ կատարել։

Ընդհանրապէս հայկական մշակոյթում ճարտարապետութեան տարածման պատմութիւնը, որքան որ խորն է գնում պատմութեան հազարամեակներից ներս, այնքան էլ մնում է չուսումնասիրուած եւ բնականաբար չարժեւորուած։ Եթէ պատմա-

կան փաստերը վկայում են, որ դեռեւս Շումերական¹ մշակոյթում դրանք առկայ էին եւ շարունակուել են յետագայ դարերում եւ տարածուել են Միջագետքից մինչեւ Եւրոպա, իրենց տարբեր զրոհւորումները գտել էգէյեան, էտրուսական եւ յետագայ դարերի մշակոյթում, ապա առնուազն անհասկանալի է, օրինակ՝ Վիտրուվիոսի (Ք.ա. Ա. դարի վերջի ճարտարապետ, տեսաբան) «լուսթիւնը»։ Այդ էլ այն դէպքում, երբ նա իր «Տաս գիրք մարտարապետութեան մասին»² աշխատութիւնում բազմիցս յիշատակում է Ասիան, Խաղերի երկիրը, խաղեան գիտութիւնը (լուսնի մասին), ծանօթ է Յունաստանի փոքրասիական ափերին, Կովկասին, Միջագետքին, Հնդկաստանին։ Սակայն յայտնի է նաեւ, որ Կեսարի շրջանում Հայաստան-Հռոմ կապը գոյութիւն

1 ԳՐԻԳՈՐԵԱՆ, Ա., Բուր-տանար մարտարապետական յօրինուածքի տիպարանական առանձնայատկութիւնները, Երևան 2013, 21: ՄՈՎՍԻՍԵԱՆ, Ա., Հայաստանը Գրիտոսից առաջ երրորդ հազարամեակում (ըստ գրաւոր աղբիւրների), Երևան 2005, 17, 101, 102: KRAMER, 1952, 6-7, 8-9, 14-15, 28-29, KANEBA 1944, N 4, 205, 208, 214, COHEN, 1973, 112, 113, 118, ETCSL, 1.8.2.3, տող 16-20, 31-32, 130-133, 374-377: ԳՐԻԳՈՐԵԱՆ, Ա., Հայկական լեռնաշխարհի մարտարապետական միջատիպերի գուգահեռների համեմատական վերլուծութիւնը, ի Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգութիւնը միջագգային գիտաժողովի նիւթերի ժողովածու, Երևան-Ստեփանակերտ 2012, 178-179:

ԳՐԻԳՈՐԵԱՆ, Ա., Հայկական լեռնաշխարհի մարտարապետական միջատիպերի գուգահեռների համեմատական վերլուծությունը, ի Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը միջագգային գիտաժողովի նիւթերի ժողովածու, Երևան-Ստեփանակերտ 2012, 178-179: ՄՈՎՍԻՍԵԱՆ, Ա., Հնագույն պետութիւնը Հայաստանում, (Ք. ա. 28-27րդ դարեր), Երևան 1992, 57-59: Ըստ «Էնմարբարը և Արատտայի գերգույն բուրմը» վիպերգի, Ուրուկի նշանաւոր էանմա տաճարը կառուցուել է Արատտայից [Հայաստան] ուղարկուած քարով: Հայկական լեռնաշխարհից եփրատով Միջագետք հայկական քարաքեղոյի տեղափոխման մասին տեղեկութիւն է պահպանուել Տիգրոսու Սիկիլիացու «Պատմական գրադարան» երկում (ԳՐԻԳՈՐԵԱՆ ՄԻԿԻԼԻԱՑԻ, Պատմական գրադարան, ԿՐԿԱՇԱՐՅԱՆ, Ա., (աշխ.) Երևան 1985, 27): Շումերները պահանջում էին, որ Արատտայի վարպետները իրենց երկրում կառուցեն տաճարներ (*Эммеркар и верховный жрец Аратты*, KANEBOY, И. Т., (транскрипции, перевод, комментарии и вводные статьи). ВДИ. 1964, N4, с. 190-225, KRAMER, S. N., *From the Tablets of Sumer*, Indian Hills, Falcon 1956, 232-234: Idem, *History begins at Sumer*, New York 1959, 204-207):

2 М. ВИТРУВИЙ ПОЛЛИОН, *Десять книг об архитектуре*, ОГИЗ, Ленинград 1936; VITRUVIUS, *Les dix livres d'architecture*, Balland 1979.

ուենէր եւ ըստ էութեան պիտի ակնկալենք, որ կային նաեւ մշակութային կապեր: Այն ինչ Վիտորուվիտա խօսում է միայն Հռոմ-Յունաստան ճարտարապետական կապերի մասին, հաւանքար որպէս հիմնաւորում ունենալով ժամանակի քաղաքական իրավիճակը:

Սա բնաւ չի նշանակում, որ այդ շրջանում մշակութային կապերը խաղաղ գոյութիւն չեն ունեցել: Հակառակ պատկերն է վերածննդի մեծ վարպետ Լէոնարդոյ դա Վինչիի մօտ, նա քաջ ծանօթ է հայ մշակոյթին եւ ճարտարապետութեանը³:

Նա տարարնոյթ նիւթեր է հաւաքել Հայաստանի եւ մասնաւորապէս հայ ճարտարապետութեան մասին: Օրինակ՝ Լէոնարդոյի ընկեր Բենեդետտոյ Դէին՝ առեւտրական եւ դեսպան Օսմանեան կայսրութիւնում, տուեալներ էր հաղորդել Սեւ ծովի, Փոքր Ասիայի լեռների, գետերի մասին, որոնց հիման վրայ Լէոնարդոն հատուածաբար ուրուագծել է Փոքր Ասիայի քարտէզի որոշ շրջաններ, ընդ որում Կիլիկիայից մինչեւ Արեւմտեան Հայաստան, էրզրում-Կարին⁴: Արմէն Զարեանը գտնում է, որ հայկական ծագում ունեցող կենտրոնակազմ գմբէթը (թմբուկ, վեղար) Լէոնարդոյ դա Վինչիի միջոցով է տեղափոխուել Իտալիա եւ տարածուել Եւրոպայում: Նա գրում է «Յատկապէս կենտրոնակազմ գմբէթածածկ շէնքը, որ քրիստոնէութեան շրջանում (Դ.-է. դարերում) ճեպարեց հայը եւ վերածնունդի ժամանակ մեծ հետաքրքրութիւն առաջացրեց Լեոնարդոյի մէջ...»⁵:

«Ենթադրում է նաեւ, որ նա ծանօթացել է հայ ճարտարապետութեան, յատկապէս Էջմիածնի-Բաղարան տիպին, Իտալիայում բնակուող հայերի հետ ունեցած խօսակցութիւնների ժամանակ»⁶:

Իմ կարծիքով գրում է Արմէն Զարեանը, Լէոնարդոյի՝ հայ ճարտարապետութեանը մօտենալը բացատրում է մտքի ձեւերի հարազատութիւնների վերլուծութեամբ, սրանք ձեւի ստեղծման գործում ունեն սկզբունքային նշանակութիւն⁷:


3 ԶԱՐԵԱՆ, Ա., Հայ ճարտարապետութեան տարածումը եւ Լեոնարդոյ դա Վինչիի հայկական վարկածը, Երևան 1994:

4 ԱճՊ, 5:

5 ԱճՊ, 6:

6 ԱճՊ, 20:

7 ԱճՊ, 21:



Նկար 1.

ՊԱՒԼԱԳԻՈՅԻ ՆԱԽԱԳԾՈՎ ԿԱՌՈՒՑՈՒԱԾ ՎԻԼԼԱՆԵՐԻ ՅԱՏԱԿԱԳԾԵՐԸ, ԵՒ
ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՎԵՐՑՈՒԱԾ ԵՆ

PALLADIO, *Les quatre livres de l'architecture*, II,
1980, PARIS, p. 115-203.

Իսկ սկզբունքը ըստ մեզ (Ա. Գ.) միկրոկոսմի մարդ-գմբէթ եւ մակրոկոսմի՝ տիեզերքի միջեւ կապի տրամաբանական աշխարհընկալման համակարգում էր, համակարգ, որ հայկական լեռնաշխարհում, քարի դարից ձեւաւորուելով հասել է միջնադար:⁸ Այս մտեցումը իր արտայայտութիւնն էր գտել Գազիկ թագաւորի կառուցած Սբ. Խաչ եկեղեցու եւ պալատի յորինուածքներում: Այս երեւոյթը նկատելի է նաեւ Պալլադիոյի վիլլաներում, որտեղ պալատի տէրը իր միկրոկոսմն էր ստեղծում մակրոյ տիրոյթում:

Խօսելով հայ-իտալական ճարտարապետական փոխառնչութիւնների մասին Իոսիֆ Ստրիգովսկին գրում է. «Իտալական վերածննդի մեծ նարտարապետները լարեցին իրենց ուժերը՝ ձգտելով կառուցել գմբէթը այնպէս, ինչպէս Հայաստանում, որպէս տարածութեան միաւորը պսակող գագաթ: Այս նպատակին համապատասխան զարգացաւ Արեւմուտքի նարտարապետութիւնը յաջորդ դարերում եւ յարատեւում է մինչեւ մեր օրերը»:⁹

«Բրամանտե,- գրում է Ի. Ստրիգովսկին,- ժառանգում է գմբէթի նառագայթածն համակարգը, որ սկզբից ի վեր կառուցում է հայկական ձևով՝ քառակուսու վրայ եւ ոչ թէ Լեոնարդոյի ձևով՝ ելնելով ութանիստից»¹⁰:

Օրինակները շատ են, փաստ է, որ իտալական վերածննդի շրջանի վարպետները՝ Բրունելլեսկի, Ալբերտի, Բրամանտէ, Ռաֆայէլլոյ, Լէոնարդոյ դա Վինչի, Միքէլանջելոյ, Պալլադիոյ եւ այլք ուղղակի թէ անուղղակի գիտէին Հայաստանի եւ հայ մշակոյթի եւ մասնաւորապէս ճարտարապետութեան մասին: Իմացութեան շղթան շարունակուում է նաեւ վերածննդից յետոյ:

Թերեւս առաւել խօսում են 1800ականները, երբ Օգիւստ Շուազին 1899ին հրատարակեց իր «Ճարտարապետութեան պատմութիւն» ուսումնասիրութիւնը¹¹:

Շուազին բազմիցս անդրադառնում է յատկապէս հայ միջնադարեան ճարտարապետութեան, նշելով, որ այն ուղղակի ազդեցութիւն է թողել հարաւային Ռուսաստանի, Սերբիայի, Ռու-

8 ՀԱՅԿԱԶՈՒՆ, Ա., Խորհրդանշանային մտածողությունը հայ նարտարապետությունում, Երևան, 2005, 175 էջ + 106 աղյուսակ:

9 ՍՏՐԺԻԳՈՎՍԿԻ, Ի., Հայ, Հայկագուն Ա., Խորհրդանշանային մտածողությունը հայ ճարտարապետությունում, Երևան, 2005, 175 էջ, + 106 աղյուսակ երի նարտարապետութիւնը եւ Եւրոպան, Բ., 862:

10 ԶԱՐԵԱՆ, Ա., Հայ նարտարապետութեան, Եջ. աշխ., 35:

11 AGUSTE CHOISY, *Histoire de L'architecture*, France, 1991.

մինիայի, Մուղուվայի եւ այլ երկրների ճարտարապետութեան վրայ¹²:

Պալլադիոյի «լոռիքիւնը» հաւանաբար կապուած է վենետիկի թագաւորութեան Արեւելեան հակուածութեան եւ ակնկալիքների հետ: Քանզի Արեւելք-Փոքր Ասիան ընկալուած էր Բիւզանդիային յաջորդած Օսմանեան կայսրութեան գոյութեամբ, որի մայրաքաղաքի՝ Կոստանդնուպոլսի հետ վենետիկը սերտ առեւտրական կապեր ունէր եւ Արեւելքից էր ակնկալուած որոշ ժողովրդավարական հայեացքների ներդրում վենետիկեան ընկերային-քաղաքական կեանքում: Սակայն սա դեռ չի նշանակում, որ վենետիկցիները չէին ճանաչում հայերին եւ չգիտէին հայ մշակոյթի մասին:

Վենետիկի եւ Հայաստանի ու հայերի կապերը դարերի պատմութիւն ունեն:

Մշակոյթի, մասնաւորապէս ճարտարապետութեան ներթափանցումը վենետիկեան դքսութիւն կարող էր կատարուել նաեւ հայ-բիւզանդական եւ յետոյ վենետիկաբիւզանդական դարաւոր կապերի շնորհիւ: Օրինակ՝ Բիւզանդիայի հայազգի կայսր Վասիլ Ա. (867-886) «... ներսից գորացնելով կայսրութիւնը, հիմք դրեց հաստատուն հարստութեան, ինչպէս նաեւ ներմուծեց [Հայաստանից] խաչածու յատակագծով հնգագմբէք [խօսքը էջմիածնատիպ եկեղեցու մասին է] եկեղեցիների կառուցումը: Այս ոճի դասական օրինակ է Ս. Մարկոս Մայր եկեղեցին»¹³:

Սուրբ Մարկոսի տաճարի ճակատն են զարդարում չորս բրոնզէ ձիերը «դրանք Տրդատի անգնահատելի նուէրներն են Ներոնին, որ Հռոմում 66 թուականին թագադրեց նրան, որպէս համայն հայոց արքայ»¹⁴:

Ուշագրաւ է նաեւ «... եկեղեցու [Ս. Մարկոսի] ներսում, ձախ կողմից 4-րդ աղեղնակամարի տակ գտնուող խաչելութեան խորանը, որն այնքան քնորոշ է հայկական ուշ միջնադարեան եկեղեցիներին, որոնք ցրուած են պատմական Հայաստանում՝ Անատոլիայից մինչեւ Ղարաբաղ, Վանից մինչեւ Ուրմիա»¹⁵:

12 Idem, 800.

13 ՀԵՐՄԵՏ, Ա. - ԿՈՆՏԻ ՌԱՏՏԻ ԴԻ ԴԷԶԻՈՅ, Պ., Հայերի վեներիկը, Կրտ. Մուրսիա - Սահակ Պարբեւ, Երևան 2000, 51:

14 Անդ, 40:

15 Անդ, 43:

Նման օրինակներ չառ կան, ոչ միայն Հայաստան-Վենետիկ, այլ նաև Իտալիա-Հայաստան մշակութային կապերի մէջ: Նշանակում է, որ Պալլադիոյի բուռն եւ բեղմնաւոր ստեղծագործական տարիների Վենետիկի մշակութային կեանքով ապրող արուեստագէտները ուղղակի թէ անուղղակի տեղեակ պիտի լինէին հայ մշակոյթի, հայոց պատմութեան եւ մասնաւորապէս հայ ճարտարապետութեան մասին:

Եթէ էջմիածնատիպ (Դ. դար) խաչածեւ յատակագծով եկեղեցու տիպը կարող էր վերստեղծուել Սբ. Մարկոսի (Թ. դար) տաճարի տեսքով, ապա նոյն յատակագծային լուծումը, որի կենտրոնում վեր էր խոյանում գմբէթը, ինչու չէր կարող հիմք հանդիսանալ Պալլադիոյի համար, իր նոր տիպի վիլլաների նախագծման եւ իրականացման գործընթացում:

Պալլադիոյի նախագծած վիլլաներում խաչածեւ յատակագծին (յօրինուածքի կենտրոնական մասում) հանդիպում ենք առնուազն եօթն անգամ, իսկ չորս սիւնանի քառանկիւն դահլիճների յօրինուածքին (որ մեզ ծանօթ հայկական գլխատան համակարգն է) առնուազն տասն անգամ:

Սակայն Պալլադիոյի վիլլաներից առաւել հետաքրքրականը վիլլա Ռոտոնդան է: Հարկ է նկատել, որ քառանկիւն (քառակուսի) եւ խորանարդածեւ, յօրինուածքը որպէս վիլլաների ընդհանուր յօրինուածքի առանցքային միաւոր, Պալլադիոյի մօտ հանդիպում է բազմիցս, մինչդեռ մինչ Պալլադիոսկան վիլլաներում նման լուծման չենք հանդիպում¹⁶:


Եթէ Պալլադիոյի «չորս գրեքը» լուռ են հայ-իտալական ճարտարապետական փոխառնչութիւնների մասին, ապա առաւել քան խօսու են նրա նախագծած վիլլաները (Յկար 2-7):

Ակնյայտ է, որ Պալլադիոն հին հռոմէական ճարտարապետութիւնից «վերցնում է» համակարգումը, սիւնաշարը եւ ճակտոցը եւ զարգացնում դրանք՝ լայնօրէն կիրառում է արուեստների համադրութեան գաղափարը՝ քանդակ, որմնանկար, զարդանախշ, եւ վիլլան միահիւստում է բնութեանը, այգուն, տեղադրում աշխարհի չորս կողմերին համապատասխան, արեւահայեաց դիրքորոշումը հաշուի առնելով, այն ինչ Հայաստանում դարերի վեր կիրառուում էր: Յենւում է քառակուսու, խաչածեւ գմբէթի՝ իր պատկերացմամբ յօրինուածքների վրայ:




16 PALLADIO, *Les quatre Livres de L'architecture*, Paris 1980, 445.


LES QUATRE LIVRES DE L'ARCHITECTURE

piraux qui, pratiqués dedans l'épaisseur du mur depuis le bas de la fosse, le vont exhiler jusques au faite de la maison.




LIVRE DEUXIEME







Նկար 3




Նկար 4



Նկար 5



Նկար 6




Նկար 7

Այս տեսանկիւնից բազմաթիւ մտորումների առիթ է տալիս Պալլադիոյի կառուցած Վիլլա Ռոտոնդան, Վիչենցիայում (1566-1570): Այն քառանկիւն կենտրոնագմբէթ յօրինուածքով միջուկ ունի, որի չորս կողմերից աստիճաններով շարունակուող ճակտոցներ են դրուած (նկար 1): Փաստօրէն գործ ունենք խորանարդ ծաւալի հետ, յօրինուածք, որ յար եւ նման է հայ միջնադարեան տաղանդաշատ ճարտարապետ Մանուէլի կողմից կառուցուած Գագիկ թագաւորի պալատի¹⁷ (Ժ. դար) յատակագծային եւ ծաւալատարածական յօրինուածքին: Երկու կառույցներն էլ յատակագծում քառանկիւնի են (քառակուսի, ծաւալում՝ խորանարդ), կենտրոնում գմբէթաւոր դահլիճով, նոյնիսկ համաչափական յարաբերութիւններն են նման եւ իրար շատ մօտ: Սակայն ակնյայտ է կառուցման ժամանակաշրջանների տարբերութիւնը այն էլ դարերով: Հետաքրքրական է նաեւ, որ Թովմա Արծրունի Անանունի Գագիկ թագաւորի պալատի նկարագրութիւնը, որպէս ականատեսի, կարծես գրուած լինի «Վիլլա Ռոտոնդայի ինտերպրետմ»¹⁸: Դրանով իսկ խնդրոյ առարկայ է դառնում պատահականութեան կամ փոխճանաչողութեան փաստացի ուսումնասիրման եւ հաստատման հարցը (նկար 8-11):

Տրամաբանութիւնը յուշում է, ինչպէս որ Պալլադիոյի ոճը տարածուեց ամբողջ Եւրոպայում եւ այլուր, քանի որ առաջագիմական, նոր խօսք ունէր իր մէջ (մէկտեղում էր յունական, հռոմէական, գոթական ոճերի առանձին ձեռքբերումները եւ վերածննդի գաղափարախօսութիւնը) այնպէս էլ Գագիկի պալատի համաչափական համակարգը, որ դարերի փորձառութիւն էր ամբարեւ իր մէջ, ի դէմս հայկական գլխատան եւ գաւթի, պաշտամունքային կառույցների հիմքում ընկած բնապաշտական պատկերացումների եւ զրանց հիման վրայ ստեղծուած ծաւալատարածական լուծումների, պիտի գրաւէր վերածննդի մեծ վարպետի ուշադրութիւնը, դառնար նոր տիպերի ստեղծման բարերար հիմք:

17 ԳՐԻԳՈՐԵԱՆ, Ա., Հայագիտութիւնը եւ արդի ժամանակաշրջանի մարտահրաւրները, ի Հայագիտական միջազգային նրկրորդ համաժողովի նիւթերը, Երևան 2013:


18 ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՒ ԱՆԱՆՈՒՆ, Պատմութիւն Արծրունեաց տան, Երևան 1978, 297-298:




Նկար 8

Վիլլա Ռոտոնդայի եւ հայկական գաւիթների յատակագծային լուծումների համեմատությունը:

տարրերակ ա.




տարրերակ բ.



Նկար 9

Գագիկ Բագատրի պալատի վերակազմությունը՝ ըստ Թովմա Արծրունիի եւ Անանունի «Պատմութիւն Արծրունեաց տան» նկարագրութեան:


տարրերակ գ.



Նկար 10


Գազիկ թագաւորի պալատի վերակազմութիւնը՝ ըստ Թովմա Արծրունիի եւ Անանունի «Պատմութիւն Արծրունեաց տան» նկարագրութեան:

տարրերակ դ.




Նկար 11

Վիլլա Ռոտոնդայի և Գազիկ Արծրունու պալատի յատակագծային լուծումների համեմատությունը:




Նկար 12

Հայկական րնակելի գլխատան եւ պաշտամունքային կառույցների գաւիթների
յատակագծային լուծումների օրինակներ:



Նկար 13

Հայկական բնակելի գլխատան եւ պաշտամունքային կառույցների գաւիթների
յատակագծային լուծումների օրինակներ:




Նկար 14


Աղբամարի Ար. Խաչ եկեղեցու յատկազիծը, արտաքին և ներքին տեսքերը
և պաշտամունքային կառույցների գլխատների ներքին տեսքը:



Նկար 15



Նկ. Գաղիկ լեռան վրա գտնվող Մեղր հայկ. նկրթիչի



Նկար 16

Պատմատեսական նիւթերը, վերածննդի շրջանի ճարտարապետական կառույցների յորինուածքների վերլուծութիւնները, հաստատում են, որ Լէոնարդոյ դա Վինչին ծանօթ էր հայկական Էջմիածնաբազարանաւոր եկեղեցիների յորինուածքային առանձնաշատկութիւններին, Բրունելլեսկին (*Cappella Pazzi, Santa Maria degli Angeli, Santa Croce* եւ այլն), գմբէթի, գմբէթարդի, խաչաձեւ եւ ութանիստ հայկական եկեղեցիների յորինուածքներին, Պալլադիոն (*«Tempietto» della Villa Barbaro a Maser, Villa Foscari, Villa Rotonda* եւ այլն) հայկական խաչաձեւ կենտրոնագմբէթ յորինուածքներին եւ ինչպէս նշուեց նաեւ Գաբրիլ Արծրունու Աղթամար կղզում կառուցած պալատի յորինուածքներին:

Եւ ինչպէս նշում է Արմէն Զարեանը Դ-է. դարերը հայ ճարտարապետութիւնը ստեղծել է այն ձեւերը, որոնց վերապտնելու ենք բարդացած, համընդհանուր նշանակութեամբ հարստացած, վերածննդի ճարտարապետների մօտ, կենտրոնագմբէթ հենաբսիղների կառույցներից մինչեւ Վինչօլայի (*Jacobo Barozzi da Vignola*) գմբէթաւոր դահլիճը՝ Ջեզուն (*Il Gesù*): Լէոնարդոյ դա Վինչին եղաւ այդ փոխանցումը սկզբնաւորող հանճարեղ արուեստագէտը¹⁹:

Շարադրուածից հետեւում է, որ հայ իտալական ճարտարապետական փոխազդեցութիւնների հարցը, ի դէմս Վիտրուվիոսի, Բրամանտէի, Պալլադիոյի, Լէոնարդոյ դա Վինչիի, Բրունելլեսկիի եւ այլոց ստեղծագործութիւնների, բազմակողմանի եւ հիմնարար հետազօտութիւնների կարիք ունի:

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐԵԱՆ

19 ԶԱՐԵԱՆ, Ա., Հայ ճարտարապետութեան տարածումը եւ Լէոնարդոյ դա Վինչիի հայկական վարկածը, Երևան 1994, 103:

Summary

SOME QUESTIONS ON THE RELATIONSHIP OF THE
ARCHITECTURAL HERITAGE OF VITRUVIUS,
BRAMANTE, LEONARDO DA VINCI AND PALLADIO AND
ARMENIAN ARCHITECTURE

ASHOT GRIGORIAN

That medieval Armenian architecture (especially religious) has had a certain influence on European architecture (Roman, Renaissance, Gothic) is already accepted by many scholars such as Auguste Choisy, Józef Strzygowski, Adriano Alpago Novello, Paolo Cuneo, etc.

However, it is also true that this issue is not thoroughly studied yet – in particular, the relationship between Armenian and Etruscan art, as well as the Armenian hypothesis of Leonardo da Vinci and other phenomena.

This issue requires, of course, a comprehensive and deep historical investigation of not only the layouts and spatial compositions of particular monuments, but also Armenian-Italian relations in general. In particular, it needs a parallel study of King Gagik's palace (X century) built by the talented medieval Armenian architect Manuel as well as the layouts and spatial compositions of the Villa Rotonda (XVI century) created by the famous architect of the Italian Renaissance Andrea Palladio. Both structures consist of a square layout with a domed hall in the center. Even the proportional correlations are quite similar and close to each other in spite of the obvious difference of six centuries between their construction periods. That is why the question of either an accidental or a mutual recognition arises that needs to be studied. However, there is no doubt that the masters of the Italian Renaissance were aware of medieval Armenian architecture due to friendly Armenian-Italian relations current in the era.

On the other hand, neither Palladio in his study titled *The Four Books of Architecture*, nor Marcus Vitruvius (to whom Palladio always refers) in his *Ten Books of Architecture* directly touch upon Armenia (it should be mentioned that the latter theorist architect of the first century B.C. mentions Asia, the Chaldean

country, Chaldean science, Mesopotamia, the Caucasus Mountains, India, and Greece), but it is beyond doubt that they must have been well aware of Armenian culture as were Leonardo da Vinci, then Auguste Choisy and other researchers.

It is a certain fact that Leonardo da Vinci was familiar with the compositional features of Armenian bagaran-type churches, as was Brunelleschi (Chapelle Pazzi, Santa Maria degli Angeli, Santa Croce, etc.) with dome and half-dome compositions as well as cruciform and octagonal Armenian churches. Palladio (Tempietto della villa Barbaro a Maser, Villa Foscari, Villa Rotonda, etc.) must have known about Armenian cruciform compositions, and, as mentioned earlier, the composition of Gagik Artsruni's palace built on Aghtamar Island.

Considering the above, one may conclude that the question of Armenian-Italian architectural relations in view of the works of Vitruvius, Palladio, Leonardo da Vinci, Brunelleschi, and others, needs comprehensive and fundamental investigations.